

**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱԼԱՏԸ IRZ-Ի ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԴԱԼԱՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ**

03.05.2019 17:43

**Վերապատրաստման դասընթաց - քննարկում**  
**14 մայիսի 2019թ.**

**Հարգելի՛ փաստաբաններ,**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և Գերմանիայի փաստաբանների դաշնային պալատի հետ համատեղ մեկ անգամ ևս կազմակերպում է փաստաբանների վերապատրաստման դասընթաց-քննարկում՝ «Փաստաբանների պալատների կողմից լրատվամիջոցների և հանրության հետ տարվող աշխատանքները» թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում գեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ**՝ Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի հասարակության հետ կապերի գծով գործադիր տնօրեն-մամուլի խոսնակ, **փաստաբան Շտեֆանի Բեյրիխը** և Գերմանիայի Թյուրինգիա քաղաքի փաստաբանների պալատի նախագահ, Գերմանիայի դաշնային փաստաբանների պալատի մամուլի և հանրության հետ աշխատանքի հանձնաժողովի անդամ, **փաստաբան Յան Հելգե Բեսթելը**, ինչպես նաև **ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը**:

**Վերապատրաստման դասընթացի շրջանակներում հյուրընկալելու ենք նաև IRZ ծրագրերի մենեջեր՝ Ամալիա Վոլքերթին:**

**Դասընթացը տեղի է ունենալու 2019թ. մայիսի 14-ին, ժամը 10:00-ից 17:00-ն՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում:**

Դասընթացն անցկացվելու է հայերեն և գերմաներեն լեզուներով՝ համաժամանակյա թարգմանությամբ:

**Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում: Դասընթացին նախապես գրանցված մասնակիցներին դասընթացի ավարտին կտրվի մասնակցության վկայական:**

Դասընթացին կարող են մասնակցել **ոչ ավել, քան 40 (քառասուն) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրանցված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին**՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

**ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵՔԵ ՎՍԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՍԲՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:**



**Ուշադրութ՞նում. սույն դասընթացը կրկնում է 13.12.2018թ. դասընթացի բովանդակությունը, ուստի խնդրում ենք այս դասընթացին չգրանցվել այն փաստաբաններին, ովքեր մասնակցել են 13.12.2018թ. դասընթացին:**

**Առդիր՝ դասընթացի օրակարգը**

**Առաջարկվող նորություններ**



**21.01.2016** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



**05.09.2016** ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



**05.09.2016** ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՐՈՒ ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



**05.09.2016** ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })